Բարձրավան գյուղ

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 48 կմ,
Հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 33 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1520 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ։
Նախկինում կոչվել է Քյուրդիկ, Երիցաթումբ, Բարձրավան է վերանվանվել 1940թ.։
Գտնվում է Որոտան գետի բարձրադիր աջ մասում, գեղատեսիլ սարավանդի վրա։ Մինչև 1931թ. Զանգեզուրի աղետաբեր երկրաշարժը գյուղը գտնվում էր Որոտանի աջ զառիվեր կողին։ Երկրաշարժի հետևանքով գյուղն ավերվել է (զոհվել է 49 մարդ) և նորը կառուցվել է նշված սարավանդի վրա։Բնակիչների մի մասը 1866թ. եկել են Շինուհայր գյուղից։
Գյուղիի տարածքում են գտնվում Սբ. Հռիփսիմե (վերականգնված 19-րդ դարում), «Քրատակի Սուրբ Մինաս» (կառուցված 1821թ. եկեղեցիները), Բղենո Նորավանքի հուշարձանների համալիրը, Պաշարաջուր և Մաճ կոչված գյուղատեղիները
Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը։
Հողային և այլ բնական ռեսուրսներ
Հողեր (ընդամենը)՝ 2795 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 995 հա, որից՝
- վարելահող՝ 276 հա, բազմամյա տնկարկ՝ 15 հա, խոտհարք՝ 278 հա, արոտ՝ 83 հա, այլ հողատեսք՝343 հա
- բնակավայրերի հողեր՝ 16 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 3 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 3 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 8 հա,
- անտառային հողեր՝ 1765 հա, որից անտառածածկ՝ 1544 հա
- ջրային հողեր՝ 6 հա